



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 7 » մայիսի 2020 թվականի N: 132-Կ ք.Գյումրի

«ԱՆԻ-ՊԵՄՋԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՐՄԱՆՈՒՇ ՄԱԴԱԹՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 6.2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Նարինե Մկրտչյանի և Արմանուշ Մադաթյանի 2020 թվականի մայիսի 5-ի դիմումները և «Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2020 թվականի մայիսի 6-ի N:152/20 տեղեկանքը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Անի-Պեմզայի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Նարինե Մկրտչյանի անաշխատունակության մեջ գտնվելու կապակցությամբ 2020 թվականի մայիսի 7-ից «Անի-Պեմզայի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել «Սառնաղբյուրի առողջության կենտրոն»

պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Արմանուշ
Մադարյանին՝ մինչև տնօրենի պաշտոնակատարի աշխատանքի վերադառնալը:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հեղ ճիշդ է

